



Ներածություն

Ինչպե՞ս է կառավարվում ինտերնետը: Այս հարցը լուրջ քննարկումների առարկա է եղել ինտերնետի ստեղծման առաջին իսկ օրերից: Իսկապես, այն, թե ինչպես են շահակիրների տարբեր խմբեր համագործակցում այս կարևոր համաշխարհային ռեսուրսի կառավարման ուղղությամբ, ազդեցություն ունի ինտերնետի բնույթի վրա՝ որպես նորարարության, ստեղծարարության և արտահայտման ազատության գլոբալ հարթակ: Ինտերնետը առանձին ցանցերի ապակենտրոնացված ցանց է, որին ապավինողներն օգնում են սահմանել դրա քաղաքականությունը:

«Ինտերնետ կառավարում» եզրույթը վերաբերում է ինտերնետի կառավարման վրա ազդող գործընթացներին: Որպես նորարարության և հզորացման բաց և վստահելի հարթակ՝ ինտերնետի պատմական և ապագա հաջողությունը կախված է ինտերնետ կառավարման ապակենտրոնացված, համագործակցային և բազմաշահառու մոտեցումից:

Թեև ինտերնետը զարգացում է ապրել կառավարության կողմից ֆինանսավորվող մի շարք հետազոտական նախագծերից, նրա վաղ շրջանի զարգացումը հիմնականում նախաձեռնել են համալսարաններից և մասնավոր կազմակերպություններից անհատներ: Սեփական ամենավաղ փուլերից սկսած ինտերնետի և ինտերնետային համաշխարհային ռեսուրսների (օրինակ՝ դոմենային անունների համակարգի) կառավարումը մեծամասամբ հիմնված է եղել վերընթաց համակարգման և համապատասխան որոշումներով շահագրգռված ու դրանց ազդեցությունը կրող կողմերի անմիջական մասնակցության վրա:

Տարիներ շարունակ կառավարման այս ապակենտրոնացված և համայնքահեն մոտեցումը նպաստել է հսկայական աճի և նորարարությունների, որոնք վճռորոշ են եղել ինտերնետի հաջողության համար և արտացոլում են տեխնիկական համայնքի վաղ նախագծերի ընտրությունը՝ կապված ինտերնետի չափորոշիչների ընդունման և իրականացման հետ: Մինչև 2005 թվականը այն, ինչ որ ավանդաբար կոչվում էր մասնավոր վերընթաց համակարգում, վերածվեց ինտերնետ կառավարման «բազմաշահառու» մոդելի, որը գոյություն ունի այսօր:

Կարևոր նկատառումներ



Ինտերնետի ապակենտրոնացված բնույթը նշանակում է, որ ինտերնետ կառավարումը չի իրականացնում մեկ կենտրոնացված մարմին: Փոխարենը՝ ինտերնետ կառավարումն իրականացվում է ապակենտրոնացված, համագործակցային ձևով, ինչը երաշխավորում է, որ հարցերը կարող են լուծվել դրանց ծագմանն առավել մոտ հարթությունում¹: Այս համատեքստում ինտերնետի՝ որոշումների կայացման ապակենտրոնացված համակարգը համանման է սուբսիդիարության սկզբունքին², որի դեպքում խնդիրները լավագույնս լուծվում են այն մակարդակում, որտեղ լուծումը կիրառվում է:

Ինտերնետի բազմաշահառու կառավարման վաղ շրջանը

2003 և 2005 թվականներին կառավարությունների, տեխնիկական համայնքի, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչները հավաքվել են Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո կայացած Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթնաժողովում (SZZԳ), որտեղ ընդունել են *Տեղեկատվական հասարակության թունիսյան օրակարգը*³: *Թունիսյան օրակարգով* ընդունվել է ինտերնետ կառավարման աշխատանքային սահմանումը՝

«...իբրևս համապատասխան դերերում կառավարությունների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության կողմից՝ ինտերնետի զարգացումը և օգտագործումը ձևավորող ընդհանուր սկզբունքների, նորմերի, կանոնների, որոշումների կայացման ընթացակարգերի և ծրագրերի մշակումը և կիրառումը»:

Այս սահմանումը ճանաչում է շահակիր յուրաքանչյուր խմբի դերը և պարտականությունները, ինչպես նաև ընդգծում է համագործակցության կարևորությունը ինտերնետի աճի և զարգացման օգտին լուծումներ փնտրելու ճանապարհին: Այն նաև կոչվում է բազմաշահառու մոդել⁴:

Բազմաշահառու մոդելն առանցքային նշանակություն ունի ինտերնետի զարգացման համար: Բացի այն, որ մոդելն ավելի հաճախ է ընդունվում ինստիտուցիոնալ մակարդակում այնպիսի մարմինների կողմից, ինչպիսիք են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) և Եվրոպայի խորհուրդը (ԵԽ), այն նաև դարձել է կիսապաշտոնական մոդել տարբեր հարցերի շուրջ քննարկումների ծավալման համար: Այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են անվտանգությունը, գաղտնիությունը, կապը և մարդու իրավունքները, ակնհայտ է, որ մեկ տեսակետը չի կարող լուծել սահմաններ չունեցող բազմաշերտ խնդիրներ: Փոխարենը՝ ինտերնետի գլոբալ խնդիրների, ինչպիսիք են սփամի և բոտ-ցանցերի հետ կապված անվտանգության հարցերը, լուծման համար կիրառվող ավելի համագործակցային, բազմաշահառու մոտեցումն արագորեն վերածվում է լավագույն գործելակերպի:

Բազմաշահառու համագործակցությունը համաշխարհային և տեղական մակարդակներում

Տարբեր շահակիրներ իրական համագործակցային ոգով սերտորեն աշխատում են ինտերնետի հետ կապված առանցքային խնդիրների լուծման ուղղությամբ: Դա կարևոր է, քանի որ ապահովում է ներառականության մի մակարդակ, որը հաճախ չի հանդիպում կառավարման ավանդական ձևերում:

¹ Ինտերնետ կառավարման ոլորտում ներգրավված կազմակերպություններին ծանոթանալու համար տե՛ս «Ինտերնետ Էկոհամակարգ» <http://www.internetsociety.org/who-makes-internet-work-internet-ecosystem>

² Սուբսիդիարությունն այն սկզբունքն է, ըստ որի՝ որոշումները միշտ պետք է կայացվեն հնարավոր ամենացածր կամ դրանց ազդեցության ենթակա ամենամոտ մակարդակում: (Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն, 2015 թ., <http://dictionary.cambridge.org/us/dictionary/english/subsidiarity>)

³ *Տեղեկատվական հասարակության թունիսյան օրակարգ*, <http://www.itu.int/wsis/docs2/tunis/off/6rev1.html>

⁴ Չնայած հստակ սահմանումների՝ «ինտերնետ կառավարում» և «բազմաշահառուություն» եզրույթները կարող են դժվարնկվել լինել այլ լեզուներով թարգմանելիս համարժեք բառի բացակայության պատճառով: Լիարժեք ընկալման համար առաջարկվում է, որ այդ եզրույթների յուրաքանչյուր հիշատակումն ուղեկցվի նկարագրությամբ:



Մասնավորապես, վաղուց ի վեր ապացուցվել է, որ ինտերնետ կառավարման համատեքստում բազմաշահառու մասնակցությունը հաջողությամբ դրսևորվում է Ինտերնետ կառավարման համաժողովի (ԻԿՀ)⁵ ձևաչափով, որը Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հովանու ներքո կազմակերպվող տարեկան ժողով է: ԻԿՀ-ն չունի որոշումներ կայացնելու իրավասություն, սակայն կարող է խրախուսել կարծիքներ, առաջարկել լավագույն փորձ, կազմակերպել քննարկումներ և ազդել ինտերնետի հետ կապված քաղաքականության վրա ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Ներպետական և տարածաշրջանային ԻԿՀ-ները բարգավաճել են վերջին մի քանի տարիներին և օժանդակել կոնկրետ խնդիրների, օրինակ՝ սփամի, համացանցում երեխաների պաշտպանության և ինտերնետի փոխանակման կենտրոնների հետ կապված լավագույն փորձի փոխանակմանը: Դրանք նաև օգտակար են եղել տեղական և տարածաշրջանային շահակիրներին ինտերնետի վերաբերյալ ծագող հարցերի շուրջ տեղեկատվություն և գիտելիքներ հաղորդելու համար: Բացի այդ, տեղական ԻԿՀ-ների ընդհանուր արդյունքը տեղական բազմաշահառու երկխոսությունների ծավալումն է, որոնք շարունակվում են նաև միջոցառումներից հետո:

Բազմաշահառու մոդելն ընդունվել է 2014 թվականի ապրիլին NETmundial հանդիպման համար⁶, որի արդյունքում ընդունվել է Ման Պաուլոյի NETmundial բազմաշահառու հայտարարությունը. վերընթաց, բաց և մասնակցային գործընթացի վերաբերյալ պարտադիր ուժ չունեցող ամփոփիչ փաստաթուղթ, որը ներառում է հազարավոր շահակիրներ ամբողջ աշխարհից:

Մարտահրավերներ

Ինտերնետ կառավարումը բնութագրվում է դերակատարների, խնդիրների և գործընթացների բազմազանությամբ, որոնք փոխազդում և փոխհատվում են տարբեր իրավասությունների միջև: Արդյունավետ համագործակցության համար այս համատեքստում պետք է հաղթահարվեն մի շարք մարտահրավերներ:

Նավարկում ապակենտրոնացված գործընթացներով: Ինտերնետ կառավարման էկոհամակարգի ապակենտրոնացված կառուցվածքը ենթադրում է, որ տարբեր խնդիրներ լուծվում են տարբեր վայրերում, ընդ որում՝ լավագույնս լուծում են ստանում դրանց ծագման առավել մոտ մակարդակում:

Ապակենտրոնացված մոտեցման մարտահրավերներից մեկն այն է, որ համաշխարհային, տարածաշրջանային և տեղական համաժողովների ընդարձակ տիրույթը, որոնցում քննարկվում են խնդիրները, պահանջում է ժամանակ և միջոցներ՝ հետևելու և մասնակցելու համար: Բացի դեմ առ դեմ հանդիպումներից, բազմաշահառու քննարկումները հանդիպումների և միջոցառումների արանքում հաճախ աշխատատար են և պահանջում են ժամանակ ու ջանքեր՝ նշանակալի ներդրում ապահովելու համար:

Շահակիր խմբերից շատերն այս մարտահրավերը հաղթահարում են համաժողովներում և նախաձեռնություններում իրենց մասնակցության համակարգման միջոցով: Բացի այդ, որոշ նախաձեռնություններ և համաժողովներ որդեգրում են տեղեկատվական բաց քաղաքականություն և առաջարկում են հեռակա մասնակցության հնարավորություններ: Նյութերի բաց հասանելիությունը և առցանց քննարկումները, ինչպես նաև հեռակա մասնակցության հնարավորությունն օգնում են հաղթահարել ապակենտրոնացված գործընթացների արդյունքում ի հայտ եկած մարտահրավերները:

⁵ Ինտերնետ կառավարման համաժողով, <http://www.intgovforum.org/cms/>

⁶ NETmundial, <http://netmundial.br/>



Կառավարությունների դերը: Այս բազմազան ապակենտրոնացված միջավայրի շուրջ ծավալվող կարևոր խոսակցությունը կառավարությունների դերի մասին են: Կառավարություններն ունեն կարևոր պարտականություններ հանրային շահերի պաշտպանության ոլորտում, սահմանում են քաղաքականություն, որն ազդում է ընդհանուր ինտերնետ միջավայրի վրա և կարևոր նկատառումներ են ներառում քննարկումներում: Ինտերնետ կառավարման վերաբերյալ երկխոսություններում կառավարությունների մասնակցությունը խիստ կարևոր է:

Օրինակ՝ *Թունիսյան օրակարգով* ճանաչվել է, որ կառավարությունները կարևոր դեր են խաղում մարդակենտրոն, ներառական և զարգացմանը միտված տեղեկատվական հասարակության կառուցման գործում: Նմանապես, Ինտերնետ կառավարման հարցերով աշխատանքային խումբը (ԻԿԱԽ) կառավարությունների համար սահմանել է դերերի և պարտականությունների մի շարք՝ վերահսկողությունից մինչև կարողությունների հզորացում և տեխնոլոգիաների ու չափորոշիչների հետազոտություններին և զարգացմանը նպաստող քաղաքականության խթանում⁷:

Թունիսյան օրակարգում քննարկվել են կառավարությունների դերի վերաբերյալ երկու առանցքային մարտահրավերներ՝ կառավարությունները պետք է հարմարվեն բազմաշահառու մոդելի ներքո բազմազան և բազմաթիվ ձայների առկայությանը, ինչպես նաև ընկալեն, որ կառավարում հասկացությունը *միայն* կառավարություններին չէ վերապահված, այլ վերաբերում է շահակիրների, ներառյալ ոչ պետական դերակատարների ավելի լայն շրջանակի:

Որոշ կառավարական մարմիններ ընդունել են ինտերնետ կառավարման բազմաշահառու մոդելը՝ որպես համաշխարհային և տեղական ինտերնետի մարտահրավերների հաղթահարման արդյունավետ և համագործակցային ուղիների մշակման եղանակ: Այդուհանդերձ, մյուսների համար բազմաշահառու մոտեցումը նվազ հարմարավետ է:

Խնդիրների բարդությունը: Ինտերնետի հետ կապված խնդիրները կարող են հատել աշխարհագրական, ոլորտային և տեխնոլոգիական սահմանները: Օրինակ՝ ցանցային չեզոքությունը և կիրառական տեխնոլոգիաներն ունեն տնտեսական, սոցիալական, իրավական և տեխնիկական կողմեր և ներառում են դերակատարներ բազմաթիվ իրավասություններից: Այս խնդիրների արդյունավետ լուծման համար շահակիրները պետք է ունենան հմտությունների և գիտելիքների լայն շրջանակ, այդ թվում՝ ոլորտային փորձագետների հետ համագործակցելու կարողություն՝ լինեն նրանք քաղաքական գործիչներ, տեխնոլոգներ, գործարարներ թե՛ քաղաքացիներ:

Տեխնոլոգիան արագ է զարգանում, սակայն պաշտոնական քաղաքականությունը և իրավական ընթացակարգերը կարող են դանդաղ մշակվել: Բացի այդ, որոշումների կայացման ավանդական մոդելները, ինչպես քվեարկությունը, կարող են հանգեցնել այնպիսի որոշումների ընդունման, որոնք քիչ են համապատասխանում օրինական և ողջամիտ նկատառումների առավել լայն շրջանակին, հատկապես, որոնք վերաբերում են փոքրամասնությունների շահերին: Կոնսենսուս ձևավորելու ձգտումը երաշխավորում է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվումն արդյունավետ արդյունքներ ապահովող որոշումների կայացման գործում:

Կոնսենսուսի ձևավորումը պատմականորեն ծառայել է որպես տեխնիկական կառավարման հիմք, ինչպես ցույց է տրված Ինտերնետի ճարտարագիտական խորհրդի (IETF) կրեդոյում. «Մենք հավատում ենք կոպիտ կոնսենսուսին և աշխատող կողմին»: Ահա այդ մշակույթն է հնարավորություն տվել IETF համայնքին գնալ տեխնոլոգիական առաջընթացին համաքայլ և մշակել ինտերնետի զարգացումը խթանող չափորոշիչներ: Նմանապես, հանրային քաղաքականության հարցերով զբաղվող

⁷ Ինտերնետ կառավարման հարցերով աշխատանքային խմբի զեկույց, <http://www.wgig.org/docs/WGIGREPORT.pdf>



հաստատությունները, ինչպես օրինակ՝ Հատկացված անունների և համարների ինտերնետ կորպորացիան (ICANN), նույնպես որդեգրել են կոնսենսուսը՝ որպես աշխատանքային մեթոդ:

Կոնսենսուսը խթանում է այնպիսի լուծումներ, որոնք համապատասխանում են արագ զարգացող ինտերնետ միջավայրի բազմազան կարիքներին, և վարընթաց կառավարման կառուցվածքը փոխարինում է վերընթաց կառավարման կառուցվածքով:

Ուղղորդող սկզբունքներ

Ստորև ներկայացված են ինտերնետ կառավարման ուղղորդող սկզբունքները.

- 1. Բաց, ներառական և թափանցիկ մասնակցություն:** Շահագրգիռ և տեղեկացված շահակիր կողմերի մասնակցությունն ինտերնետ կառավարման գործընթացներում իրենց համապատասխան դերով և պարտականություններով անհրաժեշտ է՝ երաշխավորելու, որ արդյունքներն արդյունավետ են և ընդունելի: Այն նաև ապահովում է, որ շահագրգիռ շահակիր կողմերը կարող են ուղղակիորեն մասնակցել աշխատանքներին և մուտք ունենալ դրանց արդյունքներին:
- 2. Կոնսենսուսի վրա հիմնված որոշումների կայացում:** Քաղաքականության մշակման գործընթացները պետք է հիմնված լինեն շահակիրների լայն շրջանակի թե՛ պրակտիկ փորձի և թե՛ անհատական ու հավաքական փորձագիտության վրա: Որոշումները պետք է կայացվեն կոնսենսուսի վրա հիմնված հաշվետու գործընթացների միջոցով:
- 3. Հավաքական կառավարում և հզորացում:** Ինտերնետի մշտական անվտանգության, կայունության և դիմակայունության երաշխավորման համար պետք է մշակվեն կառավարման կառույցներ և սկզբունքներ բոլոր շահակիրների սերտ համագործակցությամբ՝ յուրաքանչյուրի սեփական հմտությունների ներդրման միջոցով:
- 4. Պրագմատիկ և հիմնավորված մոտեցումներ:** Ինտերնետ կառավարման շուրջ քննարկումները, բանավեճերը և որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ և փորձառական տեղեկությունների վրա և կախված լինեն դրանցից:
- 5. Կամավորություն:** Ինտերնետի տեխնիկական քաղաքականության մշակման հարթությունում կամավորությունը նշանակում է, որ հաջողությունը որոշվում է օգտատերերի և հանրության, այլ ոչ թե կենտրոնական իշխանության մարմինների կողմից:
- 6. Զվերահսկվող նորարարություն:** Ինտերնետի նշանակալի աճը և դրանից բխող նորարարության բուռն զարգացումը և ինտերնետի օգտագործումը ինտերնետին միացման բաց մոդելի և չափորոշիչների մշակման ուղղակի արդյունքն են: Յուրաքանչյուր ոք պետք է հնարավորություն ունենա ինտերնետում ստեղծել նոր հավելված՝ առանց կենտրոնական իշխանության մարմիններից թույլտվություն ստանալու անհրաժեշտության: Ինտերնետ կառավարման մեխանիզմը չպետք է սահմանափակի կամ կանոնակարգի անհատների կամ կազմակերպությունների՝ նոր չափորոշիչներ, հավելվածներ կամ ծառայություններ ստեղծելու և կիրառելու կարողությունը:

Մերօրյա ինտերնետ էկոհամակարգը հիմնված է ինտերնետի հիմնարար սկզբունքների վրա և հզորանում է դերակատարների լայն շրջանակի ընդգրկման շնորհիվ՝ ներառելով բաց, թափանցիկ և համագործակցային գործընթացներ: Համագործակցությունը և համատեղ աշխատանքը շարունակում են էական նշանակություն ունենալ ինտերնետի նորարարությունների և աճի համար:



Լրացուցիչ աղբյուրներ

Ինտերնետ հասարակությունը հրապարակել է այս հարցի շուրջ մի շարք փաստաթղթեր և լրացուցիչ բովանդակություն, որոնք անվճար հասանելի են Ինտերնետ հասարակության կայքում.

- Ինտերնետ հասարակության ինտերնետ կառավարման հարցերի էջ, <http://www.internetsociety.org/what-we-do/internet-issues/internetgovernance>
- Ինտերնետ կառավարման ժամանակացույց, <http://www.internetsociety.org/igtimeline>
- Ինտերնետ հասարակության ինտերնետ կառավարման գործիքակազմ, <https://www.internetsociety.org/igtoolkit>
- Ինտերնետ կառավարման պատմությունը, <http://www.internetsociety.org/historyinternet-governance>
- Ինտերնետի զարգացումը և ինտերնետ կառավարումն Աֆրիկայում, <http://www.internetsociety.org/doc/internet-development-and-internetgovernance-africa>

Անգլերենից թարգմանեց Սյուզան Մարուխյանը

Անգլերեն տարբերակը այստեղ՝ <https://www.internetsociety.org/wp-content/uploads/2017/09/ISOC-PolicyBrief-InternetGovernance-20151030-nb.pdf>

